# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/25 ծածկագրով գնանշման հարցման միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.03.2020թ. ժամը 16:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Գ. Մամիկոնյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Թ. Թորոսյան /գնահատող/ |
| | Ա. Պետրոսյան /գնահատող/ |
| | Մ. Մինասյան /բացող/ |
| | Մ. Բաղդասարյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Կարապետյան |

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

ՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/25 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

Հ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/25 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. հասցեները |
|---|---|---|
| 1 | «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ | office@esic.am |
| 2 | «Ալթսորս» ՍՊԸ | info@osllc.am |

**Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ | | «Ալութսորս» ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | |
| | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | 15270000 | 12725000 | 15270000 | 13980000 | 13980000 |

**6. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին**

Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 2020 թ. մարտի 12-ին ժամը 10:00-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.03.2020թ. ժամը 10:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մամիկոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Թ. Թորոսյան /գնահատող/

Ա. Պետրոսյան /գնահատող/

Մ. Մինասյան /բացող/

Մ. Բաղդասարյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կարապետյան

**7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

7.1 «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքով ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին, ինչպես նաև դրա մեջ նշված ժամկետները չեն համապատասխանում հրավերի 7.4 կետով սահմանված պահանջներին:

7.2 «Ալութսորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված N 1՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված, ինչպես նաև հավելվածում բացակայում են <<Հավելված N 1 «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման հրավերի>> բառերը: Ինչպես նաև մասնակցի կողմից բանկային երաշխիքով ներկայացված հայտի ապահովման մեջ նշված ժամկետները չեն համապատասխանում հրավերի 7.4 կետով սահմանված պահանջներին:

**8. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

-իմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. Թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 7.1 և 7.2 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**9.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել գնահատող հանձնաժողովի կողմից 7.1 և 7.2 կետով արձանագրված անհամապատասխանությունների մասով «ԻԷՍԱՅՍԻ» և «Աութսորս» ՍՊԸ-ների կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 611 սենյակ, հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.03.2020թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Գ. Մամիկոնյան /գնահատող/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Թ. Թորոսյան /գնահատող/ |
| | Մ. Մինասյան /բացող/ |
| | Մ. Բաղդասարյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Կարապետյան |
| Բացակա անդամ՝ | Ա. Պետրոսյան /գնահատող/ |

**10. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

«ԻԷՍԱՅՍԻ» և «Աութսորս» ՍՊԸ-ները սահմանված ժամկետում շտկել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**11. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը.

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԻԷՍԱՅՍԻ» ՍՊԸ-ին (ընտրված մասնակից);

Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Աութսորս» ՍՊԸ-ին

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:***

**12. Գնահատման արդյունքների մասին.**

հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

**Գնահատող հանձնաժողով**

------------------- Գ. Մամիկոնյան

------------------- Թ. Թորոսյան

------------------- Մ. Բաղդասարյան

------------------- Ն. Կարապետյան /քարտուղար